

Դեղձանիկը՝ նուէր հեղինակ՝ Էռնեստ Հեմինգուէյ թարգմանիչ՝ Նինա Ա. Չաղինյան

Գնացքն արագ սլանում էր երկար կարմրաքար մի տան կողքով՝ բոլորուած պարտէզով ու չորս սաղարթախիտ արմաւենիներով, որոնց շուքի տակ սեղանիկներ կային ծուարած: Ճանապարհի միւս կողմում ծովն անհուն իր թելերն էր տարածել: Յետոյ աւագաքարէ ու կաւէ դարալանջեր էին գնացքին ընդառաջ վագում, իսկ ծովն այլեւս կարճ մի ընթացք էր յայտնուում հեռու ներքեւում՝ ժայռերի ներքոյ:

— Ես սրան Պալէ՛րմոյից առայ,— ասաց ամերիկուհին:— Մենք էնտեղ ընդամենը մի ժամ մնացինք, դա կիրակի առաւօտն էր: Ծախտոն ուզում էր, որ դուլարով վճարեմ ու նրան մէկուկէս դուլար տուեցի: Իսկապէս լաւ է երգում, չէ՞:

Գնացքում բաւական շոգ էր, շոգ էր նաեւ ննջավագնում: Բաց պատուհանիկից գեփիւռ անգամ չէր փչում: Ամերիկուհին իջեցրեց վարագոյրն, ու ծովն այլեւս չէր երեւում՝ անգամ հեռուից: Ննջավագնի ապակեպատ դռան միջից երեւում էին միջանցքն ու բաց պատուհանիկը, իսկ դրանից դուրս փոշեթաթախ ծառեր էին, ցոլացող ճամփայ ու խաղողի հարթ այգիներ՝ գորշաւուն բլուրներ թիկունքին...

Բազմաթիւ երկնաբերձ ծխնէլոյզներից սողացող ծուխը ձգում էր Մարսելի ուղղութեամբ, գնացքը դանդաղեցրեց ընթացքն ու անհամար ռելսուոյիներից մէկն ընտրելով՝ մօտեցաւ կայարանին: Մարսելում այն կանգնեց քսանհինգ րոպէ, եւ ամերիկուհին «Դեյլի Մեյլ»ի մի համար գնեց, կէս շիշ էլ հանքային ջուր: Նա մի քիչ զբօսնեց կառամատոյցին՝ հեռու չգնալով աստիճանահարթակից, քանի որ Կաննում, ուր տասներկու րոպէ ժամանակ ունէին, գնացքն առանց ազդանշանի էր շարժուել, ու կինը հագիւ էր հասցրել վագոն բարձրանալ: Նա փոքրիկ խուլ էր ու վախենում էր, թէ գուցէ շչակը հնչի, ու ինքը չլիս յանկարծ:

Գնացքը դուրս եկաւ Մարսելի կայարանից, ու հիմա արդեն սկսեցին երեւալ ոչ միայն սլաքներն ու գործարանների ծուխը, այլեւ, եթէ ետ նայելու լինես, քաղաքը, նաւահանգիստը՝ թիկունքին քարակոփ բլուրներ, եւ վերջալոյսի հրէ ցոլքեր՝ ջրի երեսին: Աղջամուղջի մէջ գնացքն առաջ էր սլանում, յետոյ անցաւ դաշտում վառուող մի ազարակատան կողքով: Ճամփեզրին մեքենաներ էին կանգնած, իսկ տան

անկողինն ու կահկարասին փռուած էին դաշտով մէկ: Մարդիկ խոնուելնայում էին բոցերի մէջ կորած տանը: Մութն ընկնելուց յետոյ գնացքը ժամանեց Աւինյոն: Ուղեւորները իջնումքարձրանում էին:

Փարիզ վերադարձող ֆրանսիացիները կրպակներից գնում էին օրուայ լրագրերը: Կառամատոյցին սեւամորթ զինուորներ էին կանգնած: Նրանք բարձրահասակ էին՝ դարչնագոյն համազգեստ հագած, իսկ դէմքերը էլեկտրասեան լոյսի ներքոյ մի տեսակ փայլ էին արձակում: Խիստ թուխ էին նրանք ու այնքան բարձրահասակ, որ չէին կարող տեսնել, թէ վագոններից ներս ինչ է կատարում: Գնացքը դուրս սողաց Աւինյոնից՝ կառամատոյցն ու սեւամորթներին թողնելով հեռում: Զինուորների մէջ մի կարճահասակ սպիտակամորթ սերժանտ կար:

Ննջարանում ուղեկցողը քնելու երեք տեղ բացեց մեզ համար: Ողջ գիշեր ամերիկուհին աչք չփակեց, քանի որ գնացքը ճեպընթաց էր ու խենթի պէս էր սլանում. նա վախենում էր գիշերային այդ արագութիւնից: Տիկնոջ անկողինը պատուհանի մօտ էր: Պալերմոյից գնուած դեղձանիկի՝ շորով ծածկած վանդակը միջանցք տարան՝ լուացարանի մօտ, որ միջանցիկ քամու տակ չընկնի: Միջանցքում կապոյտ լապտեր էր վառում, եւ ամբողջ գիշեր գնացքը խենթի պէս առաջ էր սլանում, իսկ ամերիկուհին բաց աչքերով ասես սպասում էր ինչոր աղէտի:

Առաւօտեան, երբ գնացքն արդէն Փարիզի մատոյցներում էր, ամերիկուհին դուրս ելաւ լուացարանից՝ շատ թարմ ու, չնայած անցկացրած անքուն գիշերին, առողջատեամիջահասակ սովորական մի ամերիկուհի: Վրայի շորը քաշելով եւ վանդակը արեւահայեաց կողմ կախելով՝ տիկինը ուղղուեց դէպի վագոնէստորան՝ նախաճաշելու: Երբ կրկին ննջարան եկաւ, անկողինն արդէն հաւաքել, նստոց էին դարձրել, դեղձանիկը թափ էր տալիս փետուրները պատուհանից հորդող արեւի շողերի ներքոյ, իսկ գնացքն աւելի ու աւելի էր մօտենում Փարիզին:

— Նա արեւ սիրում է,— ասաց ամերիկուհին:— Ա՛յ, հիմի, մի քիչ յետոյ, կերգի արդէն:

Դեղձանիկը թափ տուեց իրեն եւ կտուցը խրեց փետուրների մէջ:

— Միշտ էլ թոչուն սիրել էմ,— ասաց ամերիկուհին:— Ես նրան աղջկաս համար էմ տուն տանում... Ա՛յ, հրէս, երգում է:

Դեղձանիկը ճռուողեց, եւ վզի փետուրները տնկուեցին, յետոյ կտուցը կախեց ու կրկին սկսեց քրքրել փետուրները: Գնացքը սլանում էր կամրջով, յետոյ դուրս եկաւանացաւ իննամքով մշակուած մի անտառի միջով: Իրար ետեւից առկայծել սկսեցին Փարիզի արուարձանների լոյսերը: Այնտեղ գնգալով տրամուայներ էին անցնում, իսկ պատերին Belle Jardinière^[1], Dubonnet^[2] եւ Pernod^[3] գովազդող ցուցանակներ կային:

Այն ամենը, ինչի մօտով անցնում էր գնացքը, ասես անօթի մարդուն հրաւիրող կանչ լինէր:

Սկզբի մի քանի բռակներին ականջիս չէր հասել ամերիկուհու եւ կնոջս զրոյցը:

— Ձեր ամուսինն է՞լ է ամերիկացի,— հարցրեց տիկինը:

— Այո՛,— ասաց կինս:— Երկուսս էլ:

— Կարծում էի՝ անգլիացի էք:

— Օ՛, ոչ:

— Միգուցէ ձեզ եղպէս է թուացել ճարմանդների՞ ս պատճառով,— ասացի ես: Ես, այն է, ուզում էի ասել՝ տաբատակալներիս, բայց դա լեզուիս ծայրին անմիջապէս փոխեցի ճարմանդի, որ անգլիացու կերպս պահեմ: Նա իրօք որ խուլ էր՝ շուրթերի շարժումով էր կարդում, իսկ ես նրա կողմը չէի էլ նայում: Հայեացքս թափառում էր պատուհանից դուրս: Տիկինը շարունակում էր զրուցել կնոջս հետ:

— Ինչքա՛ն եմ ուրախ, որ ամերիկացի էք: Ամերիկացիներից է ամենալաւ ամուսինը դուրս գալիս,— ճռուտորում էր նա:— Էդ պատճառով էր, գիտե՞ք, որ Եւրոպայից հեռացանք: Աղջիկս Vevey^[4]ում սիրահարուել էր մէկին:— Նա լռեց:— Նրանք ուղղակի գժի պէս էին սիրում իրար:— Նա կրկին լռեց:— Ես, իհա՛րկէ, նրան հեռացրի էդտեղից:

— Իսկ հիմի՛՝ ո՞նց, էդ բոլորն անցա՞ւ նրա մօտ,— հարցրեց կինս:

— Չէ՛մ կարծում՝ թէ,— ասաց ամերիկուհին:— Ո՛չ մի բան չի ուտում, իսկի չի քնում: Էնքան եմ փորձել մի բան անել, բայց ոնց որ թէ նրան ո՛չ մի բան էլ չի հետաքրքրում: Ամէն ինչի հանդէպ լրիւ անտարբեր է դարձել: Հո չէի՞ կարող թողնել, որ օտարերկրացի ուզէր:— Նա դադար տուեց:— Ընկերներիցս մէկն ինձ մի անգամ ասաց, որ ոչ մի օտարերկրացի չի կարող ամերիկուհու համար հարմար ամուսին լինել:

— Ո՛չ,— ասաց կինս:— Կարծում եմ, որ՝ ոչ:

Ամերիկուհին հմայուած նայում էր կնոջճ ճամփորդական վերարկուին, ու պարզուեց, որ նա մի քսան տարի է, ինչ հագուստ է պատուիրում Rue Saint Honoré^[5]ի միեւնոյն սրահում: Նրանց մօտ կան տիկնոջ չափսերը, իսկ ծանօթ vendeuse^[6]ն, որ լաւ գիտի նրա ճաշակը, շորեր էր ընտրում նրա համար եւ ուղարկում Ամերիկա: Ինքն ու աղջիկը գալիս էին փոստատուն, որ իրենց տան մօտ էր, Նիւ Եորքի կենտրոնում, իսկ մաքսատուրքն այնքան էլ մեծ չէր, որովհետեւ տեղում էին բացում հագուստը գնահատելու համար. դրանք միշտ էլ հասարակ էին

լինում՝ առանց ոսկերիզի կամ թանկարժեք տեսք տուող զարդարանքի: Այժմեան *vendeuse* Թերեզայից առաջ մի ուրիշը կար, Ամելի անունով: Այս երկուսն են միշտ եղել այդ ամբողջ քսան տարիների ընթացքում: *Couturier*^[7]ն էլ այդ բոլոր տարիներին նոյնն է եղել: Միայն գներն են աճել: Թէեւ, ինչ խօսք, արժոյթի այսօրուայ կուրսով դա ոչ մի արժեք էլ չունի: Հիմա նրանց մօտ իր դասերը չափսերն էլ կան: Աղջիկն արդեն լրիւ չափահաս է, ու հազիւ թէ չափսերը փոխելու հարկ լինի:

Գնացքն արդեն մօտենում էր Փարիզին: Ամբուսիւնները հողին էին հաւասարեցուած, սակայն այդպէս էլ այդտեղ բուսականութիւն չէր աճել: Բազմաթիւ վագոններ էին կանգնած ռելսերին՝ դարչնագոյն փայտե վագոնտեստորաններ եւ նոյն գոյնի ննջավագոններ, որ երեկոյեան հինգին Իտալիա պիտի մեկնէին (եթէ առաջուայ պէս հինգին են շարժում), դրանց վրայ ցուցանակներ կային՝ «Փարիզձում»: այդտեղ էին նաեւ կտուրին նստոց ունեցող արուարձանային գնացքներ, որոնք սովորական օրերին երկու անգամ լցում էին ուղեւորներով մօտերքում առկայծում էին անցնող տների ճերմակ պատերն ու անթիւանհամար պատուհանները: Ամէն ինչ շուրջը մի տեսակ անօթի էր թում:

— Ամերիկացիները աշխարհում ամենալա՛ւ ամուսիններն են,— կնոջս ասում էր ամերիկուհին: Ես արդեն իջեցնում էի ճամպրուկները:— Միայն ամերիկացիների՛ հետ մարդ պիտի ամուսնանայ:

— Իսկ դուք *Vevey*ից վաղո՞ւց էք դուրս եկել,— հարցրեց կինս:

— Էս աշնանն արդեն երկու տարի կը լինի: Դէ հրե՛ս ես էլ էս դեղձանիկը նրան նուէր եմ տանում:

— Իսկ էդ երիտասարդը, որին ձեր աղջիկը սիրում էր, շուէյցարացի՞ էր:

— Այո՛,— ասաց ամերիկուհին:— Շա՛տ լաւ ընտանիքից էր: Ապագայ ինժէներ: Նրանք հենց էնտեղ՝ *Vevey*ում էլ ծանօթացել էին: Ժամերով զբօսնում էին իրար հետ:

— Ես *Vevey*ը լա՛ւ գիտեմ,— ասաց կինս:— Մենք էնտեղ ենք մեր մեղրամիսը անցկացրել:

— Իսկապէ՞ս: Պիտի որ հրաշալի ժամանակ եղած լինի: Ի՛նչ խօսք, մտքովս անգամ չէր անցնի, թէ աղջիկս կսիրահարուի նրան:

— Դա հրաշալի՛ տեղ էր,— ասաց կինս:

— Այո՛,— ասաց ամերիկուհին:— Իսկապէս լաւն է, չէ՞: Էնտեղ որտե՞ղ էիք մնում:

— «Երեք թագ» հիւրանոցում,— ասաց կինս:

— Էդ Էնքա՛ն լաւ հին հիւրանոց է,— ասաց ամերիկուհին:

— Այո՛,— ասաց կինս:— Մենք մի շատ լաւ սենեակ ունէինք, իսկ աշնանն Էնտեղ ուղղակի՛ հոյակապ էր:

— Դուք աշնա՞նն էինք Էնտեղ:

— Այո՛,— ասաց կինս:

Մենք անցնում էինք երեք վագոնների կողքով, որոնք վթարի էին ենթարկուել: Վագոնների պատերը ջարդոտուած էին, կտուրները՝ ջախջախուած:

— Նայէ՛ք հապա,— ասացի ես:— Վթար է եղել:

Ամերիկուհին պատուհանից դուրս նայեց ու տեսաւ վերջին վագոնը:— Հենց ա՛յ սրանից էի վախենում ամբողջ գիշեր,— ասաց նա:— Երբեմն ահաւոր կանխագագում եմ ունենում: Էլ սրանից յետոյ գիշերային ճեպընթաց չեմ նստի: Պիտի ուրիշ տեսակի հարմար գնացքներ էլ լինեն, չէ՞, որ արագ են գնում:

Այստեղ գնացքը մտաւ Gare de Lyons^[8]ի ծածկարանի տակ, յետոյ կանգ առաւ, եւ բեռնակիրները վազեցին պատուհանների ուղղութեամբ: Ես պատուհանից յանձնեցի ճամպրուկներն, ու մենք դուրս ելանք աղօտ լուսաւորուած երկար կառամատոյց, իսկ ամերիկուհին սեփական անձը յանձնեց Cook^[9]ի ճամփորդական բիւրոյի գործակալներից մէկի խնամքին, որն էլ դիմեց նրան.

— Մի բոպէ, մաղամ, ձեր անունը ցուցակում հիմա կը գտնեմ:

Բեռնակիրը մօտեցրեց սայլակն ու վրան դարսեց իրերս, եւ կինս ու ես հրաժեշտ տուեցինք ամերիկուհուն, որի ազգանունը Cookի գործակալը արդէն գտել էր մեքենագրուած թղթերի կոյտի մէջ, ու յետոյ թղթերը կոխեց գրպանը:

Մենք բեռնակրի ետեւից գնացքի կողքով երկար ցեմենտե կառամատոյցով վար իջանք: Կառամատոյցի ծայրին՝ մուտքի մօտ, հսկիչը վերցնում էր տոմսերը:

Մենք Փարիզ էինք վերադառնում, որ սկսենք մեր ամուսնալուծութեան գործընթացը:

1. Belle Jardinière (Ֆր.) — խոշոր քառայարկ խանութ Փարիզի Սամարիտեն փողոցի վրայ

2. Dubonnet (Ֆր.) — ապերատիւ /խմիչք/

3. Pernod (Ֆր.) — անիսոնի օղի

4. Vevey (Ֆր.) — Վեյվե, քաղաք Շուեյցարիայում

5. Rue Saint Honoré (Ֆր.) — Մենտ Օնորէ, փողոց Փարիզում

6. vendeuse (Ֆր.) — վաճառողուհի

7. Couturier (Ֆր.) — ձեւարար վարպետ

8. Gare de Lyons (ֆր.) — Լիոնի կայարան, Փարիզի երկաթուղային կայարաններից մեկը
9. Cook (անգլ.) — Կուկի ֆիրման, ճամփորդական բիւրոյ